[ԱՆՎԵՐՆԱԳԻՐ. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԳՄԲԵԹԻ ՄԱՍԻՆ]

Որ Էջմիածնում, քրիստոնեությունը, որպես պաշտոնական կրոն ընդունվելու ժամանակներում (IV դ.) գործել է եկեղեցի, կասկած չի կարող լինել: Այս մասին պատմիչ Ագաթանգեղոսի (V դ.) հաղորդումը Ա. Յակոբսոնը «լեգենդար» համարելու որևէ հիմք չունի: «Կաթողիկե» համարվող IV դարի եկեղեցին եղել է ուղղանկյուն պարագծով պարզ աղոթասրահ, թե մեկ կամ երեք նավերով բազիլիկ, բոլորովին այլ հարց է: Հաղորդվում է նաև, որ V դարի վերջերում Վահան Մամիկոնյանը եկեղեցին «восстановил от основания»:

Ա. Յակոբսոնը գրում է, որ «Правильнее, как нам представляется, отнести первоначальную базилику к концу V в., когда Ваган Мамиконян «восстановил от основания» весь храм, а перестройку его в купольное центрическое здание с четырмя выступающими полукружиями связать, как и думал Т. Тораманяна, со строительством католикоса Комитаса в VII в.»:[1]

Թորամանյանին այդ ձևով չի կարելի վկայաբերել. նրա խոսքը վերաբերում է միայն բազմանիստ աբսիդները դուրս բերելուն, և ոչ եկեղեցին խաչաձև հիմքով կենտրոնագմբեթ տաճար դարձնելուն: Առանց այդ դուրս եկած խաչաթևերի էլ, եկեղեցին դարձյալ կենտրոնագմբեթ է:

Եթե V դարում Վահան Մամիկոնյանին վերագրվի նոր բազիլիկի կառուցումը, ապա պատմիչը չէր կարող այդ որակել որպես «վերակառուցում», կգրեր «կառուցեց»: Նա ինչը՞ պիտի վերակառուցեր, այն էլ հիմնավորապես:

Ըստ Ա. Յակոբսոնի «... в общей композиции здания подкупольный объем еще не доминирует, ... Это обьясняется тем, что строители собора были связаны необходимостью использовать остатки более древней базилики (две восточные пары столбов [базилики – Т.М.], определившие место и диаметр купола)»:[2]

---

[1] А. Л. Якобсон, Закономерности в развитии раннесредневековой архитектуры, Ленинград, 1983, стр. 118, прим. 12.
[2] Там же, стр. 122.

Պեղումներով պարզվում է, և այդ հատակի ապակեպատից թափանցում, ու այժմ էլ երևում է, որ Էջմիածնի գմբեթակիր սյուները դրվել են ոչ թե «վերակառուցված» բազիլիկի արևելյան սյուների հիմքերի վրա, այլ եկեղեցու վերնամասերին պատկանող ձևավոր քարերով ստեղծված բոլորովին նոր հիմքերի վրա: Այստեղից հետևում է, որ գմբեթատակ ծավալի, նույնն է, թե գմբեթի տրամագծի փոքրությունը կապված չի եղել նախկին տաճարի սյուների հիմքերի օգտագործման հետ:

Սեբեոսը հաղորդում է, որ «[Католикос Кумитас] также снял деревянную кровлю святого собора в Вагаршапате, восстановил ветхие части стен, построил каменную кровлю»:[3] Այս հիման վրա Ա. Յակոբսոնը եզրակացնում է «Перед тем собор, по сообщению Себеоса (VII в.), был перекрыт деревянным «куполом» (шатром)»:[4]

Ոմանք Յակոբսոնի ձևով կարծում են, որ Էջմիածնի գմբեթը սկզբնապես՝ մինչև VII դարը, եղել է փայտածածկ: Այս ճիշտ չէ: V դարում Վահան Մամիկոնյանի վերակառուցած տաճարի գմբեթը եղել է քարակերտ, հետագայում քանդվել, ապա կառուցվել է ժամանակավորը՝ փայտակերտը, VII դարում նորից ծածկվել քարով: Որ իրոք, եղել է այսպես, հավաստում են հետևյալ հանգամանքները՝

ա) փայտակերտ գմբեթները ունենում էին համեմատաբար մեծ տրամագիծ, մինչ Էջմիածնում բավական փոքր է:

բ) պատմիչը հաղորդում է, որ փայտաշեն գմբեթը քարաշեն գմբեթով փոխարինելուց առաջ «... восстановил ветхие части стен...»: Այսպիսի դեպքերում ոչ միայն խարխլված պատերն են նորոգվում, վերակառուցվում, այլ և գմբեթակիր սյուները՝ վերջիններիս կրողունակությունը մեծացնելու նպատակով: Այլ կերպ

[3] История епископа Себеоса, перевод с четвертого исправленного армянского издания Ст. Малхасянц, Ереван, 1939, стр. 77.
[4] А. Л. Якобсон, Закономерности в развитии раннесредневековой архитектуры, Ленинград, 1983, стр. 122.

էլ չպիտի լիներ. այս հարցում հավաստի խոսք կարող է ասել ճարտարապետ-շինարարը միայն: Եվ քանի որ VII դարում Էջմիածնում ամրացվել են պատերի լոկ խարխլված մասերը, որոնք գմբեթակիր չեն, մինչ գմբեթակիր սյուները մնացել են անձեռնմխելի, և նրանց վրա բարձրացվել է քարակերտ գմբեթը, նշանակում է այդ սյուները հենց սկզբից էլ կառուցվել են քարակերտ գմբեթներ կրելու համար:

գ) V դարի վերջերում, առավել ևս VI դարում Հայաստանում քարե գմբեթներ կառուցել գիտեին: Վահան Մամիկոնյանի պես իշխանը հայ եկեղեցու կենտրոնը չպիտի հանդուրժեր փայտակերտ գմբեթով ծածկել: Իսկ VI դարի կաթողիկոսները, որ նշանավոր տաճարներ են քարով գմբեթավորել, չպիտի հանդուրժեին Էջմիածնի գմբեթի փայտակերտ լինելը և պիտի փորձեին ավելի վաղ՝ մինչև VII դարի I քառորդը, այն փոխարինել քարակերտով:

Ինչպես տեսնում ենք, այս հարցում Ա. Յակոբսոնը, ինչպես և նույն կարծիքն ունեցող Ն. Տոկարսկին, պարզապես վրիպում են: Այս հարցը Յակոբսոնի համար սովորականներից չէ: Էջմիածնի և Տեկորի V դարից VII դար հասցնելը նրան հնարավորություն է տալիս հիմքում խաչաձև կենտրոնագմբեթ տաճարներից առաջինը Սիրիայի Ռուսաֆին (569-586 թթ.) և ոչ Էջմիածինը (Հայաստան, IV դ.) համարելու համար: